ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան

06/21/2024

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝
<<Հանրապետություն>> խմբակցության անդամ՝ Արեն Աղաջանյանը,

<<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության անդամներ՝ Արամայիս Աղաբեկյանը, Սեդրակ Գալստյանը, Սվետլանա Եգանյանը, Նարեկ Հովհաննիսյանը, Ջոնիկ Մարուքյանը

Նիստին մասնակցում էին՝
Վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և բնակիչներ,

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը.

1) << Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2024թ. հունիսի 21-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2) Թումանյան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին
3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին
4) Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու

մասին
5) Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6) Թումանյանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին
7) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
8) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
9) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 06-004-0020-0036 ծածկագրի 0,01795 հա մակերեսով համայնքային սեփականության հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
10) Թումանյան համայնքի Չկալով գյուղի 1-ին փողոցի 2-րդ փակուղու և 14-րդ փողոցի թվային անվանակոչելու մասին
11) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի ենթակայության <<Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ում ֆոտովոլտային կայան տեղադրելու մասին
12) Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրում կրթահամալիր կառուցելու մասին
13) Սիմոնյան կրթական հիմնադրամին նոր Թումո կենտրոն հիմնելու համար տարածք հատկացնելու մասին
14) Թումանյան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղականինքնակառավարմանմասին>> ՀՀօրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի 2025-2027թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի վարչական և ֆոնդային մասերի եկամուտների տարեկան մուտքերի հավաքագրման փոփոխությունը՝ ըստ դրանց գանձման (ապահովման) համար պատասխանատու ստորաբաժանումների նախագծերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարի գլխավոր քարտուղարի

05.06.2024թ. N 01/27.1/21909-2024 գրությունը՝
Թումանյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թումանյան համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների և համայնքային ենթակայության արտադպրոցական ուսումնական հաստատության (արվեստի դպրոցի)՝ ծառայություններից օգտվողների համար սահմանված տեղական վճարների դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

1) Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, 1.5-5 տարեկան երեխաների համար.

2) Զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաների համար.

3) Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ 1-ին կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների, ազատամարտիկների երեխաների համար.

5) 1-ին կարգի հաշմանդամ երեխաների համար.

6) Փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաների և աղետի կամ պատերազմական գոտուց Հայաստան (Թումանյան համայնք) տեղափոխված ընտանիքների երեխաների համար.

7) Չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների մեկ երեխայի համար.

2. Թումանյան համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների և համայնքային ենթակայության արտադպրոցական ուսումնական հաստատության (արվեստի դպրոցի)՝ ծառայություններից օգտվողների համար սահմանված տեղականվճարների դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափերի նվազեցման արտոնություններ՝տեղական վճարի նկատմամբ 50 տոկոսի դրույքաչափի կիրառմամբ.

1) 1-ին կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների, ազատամարտիկների երեխաների համար.

3) Երեք անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների մեկ երեխայի համար.

4) Խնամատար ընտանիքներում ընդգրկված երեխաների համար.

3. Յուրաքանչյուր ընտանիքի մեկ երեխայի համար կարող է սահմանվել տեղական վճարի մեկ արտոնություն՝ իրենց ընտրությամբ:

4.Սահմանել Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Թումանյան համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ հանդիսացող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ն/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի, Քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի և ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 47-րդ և 49-րդ կետերի պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (հողամասերի, այլ անշարժ և շարժական գույքի) վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Սուրեն Թումանյան՝ Թումանյանհամայնքի ղեկավար –հանձնաժողովի նախագահ՝ աճուրդավար,
2) Ռոման Շաքարյան՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ-հանձնաժողովի անդամ,
3) Դավիթ Վանյան՝ համայնքի ավագանու անդամ-հանձնաժողովի անդամ,
4) Արմեն Չոփուրյան՝ համայնքի ղեկավարի խորհրդական,հանձնաժողովի անդամ,
5) Ռոման Թորոսյան՝ առաջատար մասնագետ,հանձնաժողովի անդամ՝արձանագրող,
6) Երվանդ Շաքարյան՝ տնտեսվար- հանձնաժողովի անդամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի՝ ավագանու 2022 թվականի հունիսի 07-ի թիվ 44 – Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ, ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության,Լոռու մարզի ,Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 22-ի << Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 88 – Ա որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ստորև նշված գույքն ընդգրկել Թումանյանի համայնքապետարանի գույքացանկում՝ համապատասխան սկզբնական արժեքներով, այդ թվում՝

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔ				
h/h	անվանում	չ/մ	քանակ	գին	գումար
1	Բազմաֆունկցիոնալ էքսկավատորCASE 570V, Համալրված է Հիդրոմուրճով՝ Հիդրոմուրճ Impulse 150 NH Classic 1 հատ,Արագ միացման համակարգով New Holland LB110/115(MOP-390/400)-ի համար, 1հատ,Նեղ շերեփով GP-07-300-0,7-NH-LB110 1 հատ, Կախոցամատով Delta F-5, 4հատ, Մոնտաժային կոմպլեկտ New Holland LB150	հատ	1	28 350 000	28 350 000
	ընդամենը				28 350 000

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով,ՀՀ քաղաքաշինության մասին օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշումը և որակավորված <<ԿԱՐՏՈԳՐԱՖ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար,Թումանյան համայնքիԹումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0015-0038 կադաստրային ծածկագրից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,005739 հա մակերեսով հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, սեփականաշնորված չեն և այն ՀՀ կառավարության 13.04.2006 թվականի N 719-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի 39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով ,ՀՀ քաղաքաշինության մասին օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշումը և որակավորված << ՏՍ ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 11/06/2024 թ. <<Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին >> Կ-11062024-06-0195 որոշումը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար, Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 06-004-0006-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.01326 հա մակերեսով հողամասի և 11, 40 քմ տնտեսական շինության նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, սեփականաշնորհված չէ և այն ՀՀ կառավարության 13/04/2006 թվականի N 719-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին,առաջնորդվելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի 39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2.Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ դիմել ՀՀ ԱԳԿ կոմիտեի աշխատակազմի

Լոռու մարզային ստորաբաժանում, նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ստանալու համար:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
5.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 29.05.2024թ. թիվ 46-Ա որոշումը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 06-004-0020-0036 ԾԱԾԿԱԳՐԻ 0.01795 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5-րդ բաժնի պահանջներով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-004-0020-0036 ծածկագրում գտնվող 0,01795 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 510000 (հինգ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ:
2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԿԱԼՈՎ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ ԵՎ 14-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹՎԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյան համայնքի Չկալով գյուղի կադաստրային քարտեզում 1-ին փողոցի 2-րդ փակուղին անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ.

1) 1-ին փողոցի 2-րդ փակուղին սկսվում է 1-ին փողոցից և անցնում է՝ 0016-0001, 0016-0002, 0016-0003 և 0016-0008,0016-0007, 0016-0006, 0016-0005 ծածկագրերի միջնամասերով, հատվելով 0016-0004 ծածկագրի հողամասի հետ:
2. Թումանյան համայնքի Չկալով գյուղի կադաստրային քարտեզում 14-րդ փողոցը անվանակոչելիհետևյալ թվային հաջորդականությամբ.
1) 14-րդ փողոցը սկսվում է 4-րդ փողոցից և անցնում է՝ 0016-0016, 0016-0019, 0016-0011, 0016-0010, 0016-0005, 0016-0004 և 0026-0003, 0026-0002, 0026-0001 ծածկագրերի միջնամասերով, վերջանում 0026-0001, 0016-0004 և 0125-0033 ծածկագրերով հողամասերի հատման կետում:
3. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 29.05.2024թ. թիվ 45-Ա որոշումը:
4. Սույն որոշումնուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ- ՈՒՄ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով Էներգախնայողության աջակցման հիմնադրամի և Թումանյանի համայնքապետարանի կողմից 21 մայիսի 2024 թվականի կնքված համագործակցության հուշագիրը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն <<Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում>> ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի ենթակայության <<Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ում 5 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայան տեղադրելու և համայնքապետարանի կողմից 400 000 ՀՀ դրամ համաֆինանսավորելու համար:
2.Սահմանել, որ՝ ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Թումանյան համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՐՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջի,Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Բաղինյանի 10.05.2024թ. թիվ Ե/01/1294-24 դիմումը և համայնքի

ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված ՀՀ, Լոռու մարզի, Թումանյան համայնքի, Լորուտ գյուղում կրթահամալիրի կառուցմանը:
2. Սույնորոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին
ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ՝ ՆՈՐ ԹՈՒՄՈ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հուլիսի 4-ի N 59-Ա որոշումը և հաշվի առնելով Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն Մարի Լու Փափազյանի 2024թ. 14.06.2024թ. դիմումը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Թումանյան համայնքի,Դսեղ բնակավայրի,14-րդ փողոց 8/1 հասցեում գտնվող 0.017372 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասը 10 տարի ժամկետով,անհատույց օգտագործման իրավունքով Սիմոնյան կրթական համալիրին տրամադրելու համար:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշել 2024 թվականի սեպտեմբերի 20-ը, ժամը 11:00:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Թումանյան համայնքի ավագանու նիստին մասնակից ավագանու անդամներ՝

1.ԲԵԳԼԱՐՅԱՆ ՀՈՎՆԱՆ

2.ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

4. ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐՈ

6.ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

7.ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

8.ՎԱՆՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ

9.ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ